

կաթուղիկեայ հաւատքն ընդունի եւ տարածէ։
 Կաթուղիկոսն ընդդիմացաւ, այս գաղափարն
 անգործադրելի հռչակեց, եւ բարեկամաբար
 խորհուրդ տուաւ, որչափ կարելի է շուտ մեկնիլ
 երթալ։ Նոյն միջոցին միաբաններ դուրսն աւանջ
 կը դնէին խօսուածքին. եւ երբ Սարգիս դուրս
 ելաւ՝ ասոնք ներս մտան եւ պահանջեցին, որ
 Կաթուղիկոսը իրենց յայտնէ խօսակցութիւնը,
 ապա թէ ոչ զինք Գահընկէց կ'ընեն. վասն զի
 Ղուկաս՝ Բասենցւոյն աշակերտն եւ ասոր Եւդո-
 կիոյ նուիրակութեան ժամանակ եօթը տարի
 քովը մնացած ըլլալուն, կը կասկածէին անոր
 հաւատքին վրայ, եւ այս պատճառաւ Կաթու-
 ղիկոս ընտրուելուն առաջին տարիները զինք չէին
 ուզեր ճանչնալ։ Եւ երբ իմացան նիւթը, մէջեր-
 նէն ոմանք Սարգսին հրամայեցին որ շուտով
 մեկնի, ապա թէ ոչ՝ մինչեւ իսկ մահը կը գտնէ։
 Սարգիս անոնց հետ ալ հաւատոյ վրայ խօսե-
 ցաւ։ Յաջորդ օրը Կաթուղիկոսը ժողովք կազմեց,
 եւ Սարգիս բանտի դատապարտուեցաւ. երկու
 օր ետքը Եպիսկոպոսաց առջեւ հանեցին, որոնց
 մէջ էր Մինաս Եպ. աւագ վարդապետաց, Մկր-
 տիչ Եպ. զաղնատար եւ Դանիէլ Եպ. Կար-
 պասճի՝ որ 1792ին նուիրակ-առաջնորդ եղաւ
 Կարնոյ. ասոնք զինքը ձեռնեցին, ոտնակոխ ըրին եւ
 արիւնաթաթաւ բանտարկեցին։ Յետոյ խոս-
 տումներ ըրին՝ եթէ Կաթուղիկէութիւնը թողու-
 եւ երբ ընդդիմացաւ, հրկաթ կապեցին ոտքն ու
 ձեռքը եւ աւելի մութ բանտ նետեցին, ուր 20
 օր մնալով, յաջողեցաւ ձեռքերն ու ոտքերն ազա-